ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «20» սեպտեմբերի 2016 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 40 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐԻ ՓԱԹԵԹԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 1269-Ն որոշման հավելված 1-ի 12-րդ կետի 1-ին և 4-րդ ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ու Մ ԵՄ

1. Կազմակերպել «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016» միջազգային մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հրավերի փաթեթը՝ համաձայն Հավելվածի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
2016 թ. սեպտեմբերի 20 -ի
թիվ 40-Ա հրամանի

ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) միջև 2010 թվականի նոյեմբերի 4-ին կնքված «Համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում Կոմիտեն և Հիմնադրամը, ցանկանալով նպաստել գիտական հետազոտությունների ոլորտում երկկողմ համագործակցության զարգացմանը, հայտարարում են գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի աջակցության **«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016» ՄՐՑՈՒՅԹ՝** գիտության հետևյալ բնագավառների ուղղությամբ.

- մաթեմատիկա,
- ինֆորմատիկա,
- ֆիզիկա,
- աստղագիտություն,
- քիմիա,
- կենսաբանական գիտություններ,
- բժշկագիտություն,
- գիտություններ մարդու և հասարակության մասին,
- գիտություններ Երկրի մասին,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվողական համակարգեր,

- մեխանիկա,
- ճարտարագիտական գիտությունների հիմնարար հիմունքներ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված նախագծերի ֆինանսավորումն իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի գծով ծախսերի «Միջազգային գիտական համագործակցություն» ծախսային ենթածրագրի ֆինանսական միջոցների հաշվին:

1.2. Նախագծերն իրականացվում են հայ և բելառուս գիտնականներից կազմված խմբերի կողմից՝ հայաստանյան կողմից ներառելով **2-ից 4 մասնակից**: Նախագծի հայաստանյան խմբում կարող են ընդգրկվել գիտական պետական կազմակերպություններում և պետական բուհերում աշխատող գիտնականները, գիտաշխատողները (նաև դասախոսներ), առկա և հեռակա ուսուցման ասպիրանտները և մագիստրատուրայի ուսանողները:

1.3. Կոմիտեի և Հիմնադրամի կողմից ֆինանսական աջակցություն ստանալու պարտադիր պայման է հետազոտության արդյունքների հրապարակումը գիտական պարբերականներում և ամսագրերում, այդ թվում՝ միջազգային: Հետազոտությունների արդյունքները հրատարակելիս ցանկացած մասնակից պարտավոր է նշել Կոմիտեի և Հիմնադրամի կողմից ստացած աջակցության մասին՝ նշելով նախագծի ծածկագիրը, օրինակ.

- Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ___ և ՀՀԲՀՀ (ԲՀ) ___ գիտական համատեղ ծրագրերին տրամադրված ֆինանսական աջակցության միջոցների շրջանակներում:

- Исследование выполнено при финансовой поддержке ГКН МОН РА и БРФФИ (РБ) в рамках совместных научных программ ___ и ____ соответственно.

- This work was supported by the RA MES State Committee of Science and Belarusian Republican Foundation for Fundamental Research (RB) in the frames of the joint research projects SCS _____ and BRFFR ____ accordingly.

1.4. Կոմիտեն և Հիմնադրամը իրավունք ունեն տպագիր կամ էլեկտրոնային տեսքով հրապարակելու ֆինանսավորման երաշխավորված նախագծերը և դրանց գիտական հաշվետվությունների անոտացիաները:

1.5. Արգելվում է՝

- միևնույն նախագիծը ներկայացնել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող այլ մրցույթների,
- Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ ընթացող մեկ այլ մրցույթի համար արդեն իսկ ներկայացված կամ ֆինանսավորման երաշխավորված նախագծերը ներկայացնել սույն Մրցույթին:

1.6. Մրցույթին չեն կարող մասնակցել Կոմիտեի կողմից ֆինանսավորվող միաժամանակ երկու մրցութային, այդ թվում՝ միջազգային, թեմաների (ծրագրերի) ղեկավարները կամ կատարողները (բացառությամբ անհատական խրախուսման մրցույթների շահառուների), եթե այդ թեմաները (ծրագրերը) չեն ավարտվում մինչև սույն Մրցույթի արդյունքում երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման սկիզբը:

1.7. Մրցույթին չեն մասնակցում այն նախագծերի հայտերը, որոնք՝

- Կոմիտե ստացվել են հայտերի ընդունման համար հայտարարված ժամկետից ուշ,
- լրացվել են ոչ ըստ հայտերին ներկայացվող պահանջների,
- անվանմամբ և (կամ) բովանդակությամբ համընկնում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող (ֆինանսավորված) և իրականացվող (իրականացված) որևէ թեմայի կամ ծրագրի անվանման և (կամ) բովանդակության հետ:

1.8. Նախագծերի իրականացման ժամկետը **12** կամ **24** ամիս է:

1.9. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել գիտական ծրագրի տեսքով՝ սույն Հրավերի **Հավելված N 3**-ի ձևերին համապատասխան:

1.10. Մրցույթի մասնակիցները նախապես միմյանց հետ համաձայնեցնում են համատեղ հայտի բովանդակությունը: Նախագծի հայերեն անվանումը պետք է համընկնի բելառուսական կողմի ներկայացրած նախագծի անվանման հետ: Վերջնականապես ձևավորված և համաձայնեցված հայտը հայաստանյան կողմը ներկայացնում է Կոմիտե, իսկ բելառուսական կողմը՝ Հիմնադրամ:

2. Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1. Նախագծի հայաստանյան խմբի բոլոր անդամները պետք է հանդիսանան ՀՀ մշտական բնակիչներ և նախագծի իրականացման ընթացքում պետք է բնակվեն Հայաստանի Հանրապետությունում:

2.2. Խմբի ղեկավար կարող է լինել գիտական աստիճան ունեցող անձը, ով ունի առնվազն 5 (հինգ) տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության ստաժ և վերջին 5 (հինգ) տարիների ընթացքում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (Scopus, Thomson Reuters և այլն), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ անդամ-պետությունների Բարձրագույն որակավորման հանձնաժողովների ցանկերում ընդգրկված գրախոսվող ամսագրերում հրատարակված առնվազն 5 (հինգ) հոդված կամ 2 (երկու)՝ առնվազն 5 (հինգ) տպագրական մամուլ ծավալով, գիտական կազմակերպության կամ բուհի գիտական խորհրդի երաշխավորություն ունեցող և ISBN նշումով հրապարակում (մենագրություն): Մեկ հրապարակումը համարժեք է գրախոսվող ամսագրերում հրապարակված 3 (երեք) հոդվածի:

2.3. Խմբի ղեկավարը և կազմակերպությունը, որտեղ իրականացվելու է նախագիծը, պետք է լինեն պաշտոնապես ձևակերպված աշխատանքային և քաղաքացիաիրավական հարաբերություններում կամ պարտավոր են ձևակերպել այդպիսի հարաբերություններ ֆինանսական աջակցությունը ստանալուց հետո:

2.4. Խմբի ղեկավարը չի կարող լինել այն անձը, ով գտնվում է նախագծի կատարողի վարչական ենթակայության տակ:

2.5. Խմբի ղեկավարը և մասնակիցները պետք է ներգրավված լինեն միայն 1 (մեկ) նախագծում:

2.6. Նախագծի հայաստանյան մասնակիցներից առնվազն մեկը պետք է լինի մինչև 35 տարեկան կամ գիտաշխատող, կամ ասպիրանտ, կամ մագիստրանտ:

2.7. Սույն Մրցույթին մասնակցությունը, անկախ դրա արդյունքներից, չի խոչընդոտում դիմորդին մասնակցելու Կոմիտեի կողմից անցկացվող այլ մրցույթներին:

3. Հայտերի լրացման կարգը և ներկայացումը

3.1. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել հայերենով՝ մեկական տպագիր և էլեկտրոնային (խտասկավառակ) տարբերակներով:

3.2. Հայտն անհրաժեշտ է Կոմիտե ներկայացնել խմբի հայաստանյան կողմի ղեկավարի գրավոր դիմումով (**Հավելված N 1**)՝ աշխատանքային օրերին, ժամը 10:00 - 13:00 և 14:00 - 17:00, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22, 7-րդ հարկ, 708 սենյակ:

3.3. Հայտերն ընդունվում են **2016 թ. սեպտեմբերի 22-ից մինչև 2016 թ. նոյեմբերի 10-ը** ներառյալ (ժամը 17^{00}):

3.4. Հայտը բաղկացած է 1, 2, 3, 4 և 5 ձևերից:

3.5. Հայտի ղեկավարի ստորագրությունը պետք է լինի կազմակերպության գիտական քարտուղարի կամ ղեկավարի ստորագրությամբ հաստատված և կազմակերպության կնիքով վավերացված:

3.6. Հայտն անհրաժեշտ է ներկայացնել A4 ձևաչափի թղթի վրա տպված, 1.5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով («Sylfaen»՝ հայերեն և «Times New Roman»՝ անգլերեն ու ռուսերեն տեքստերի համար)՝ պահպանելով հայտի ձևերում առկա աղյուսակների ամբողջականությունը: Հայտի էլեկտրոնային տարբերակը պետք է ներկայացնել «Microsoft Word» ձևաչափով՝ մեկ ամբողջական ֆայլով, որի ծավալը չպետք է գերազանցի 4 մեգաբայթը (Mb):

3.7. Խմբի անունից հանդես գալու իրավունք ունի միայն խմբի ղեկավարը:

3.8.Կոմիտեն անցկացնում է ստացված հայտերի տեխնիկական ստուգում: Այն հայտերը, որոնք տեխնիկական ստուգման արդյունքում կճանաչվեն սույն հրավերի պահանջներին համապատասխանող, կներկայացվեն գիտական փորձաքննության:

4. Նախագծերի գիտական փորձաքննությունը

4.1. Հայտերը ենթարկվում են անկախ գիտական փորձաքննության՝ հայաստանյան կողմի ներկայացրած հայտերը՝ Կոմիտեի, իսկ բելառուսական կողմինը՝ Հիմնադրամի կողմից: Գիտական փորձաքննության կազմակերպչի և փորձագետների կողմից հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց արգելվում է:

4.2. Հայտերը տրամադրվում են Կոմիտեի նախագահի հրամանով ստեղծված Մասնագիտական փորձագիտական խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ)՝ Կոմիտեի

փորձագետների շտեմարանում ընդգրկված փորձագետների ներգրավմամբ գիտական փորձաքննությունն իրականացնելու համար:

4.3. Փորձաքննությունն իրականացնելիս փորձագետն առաջնորդվում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկով (**Հավելված N 4**):

4.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում առնվազն 2 (երկու) փորձագետի կողմից: Յուրաքանչյուր հայտի համար փորձագետն առցանց լրացնում է գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին: Փորձագետի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի առնվազն 80 տոկոսը:

4.5. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50% և ավելի չափով տարբերվելու դեպքում հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է:

4.6. Խմբի ղեկավարի և մասնակիցների մասնագիտական որակավորումը և համապատասխանությունը հայտի գիտական խնդիրները լուծելուն գնահատվում է Խորհրդի կողմից, որի գնահատականը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի առնվազն 20 տոկոսը:

4.7. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագետների գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է:

4.8. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում են հայտի գիտական և գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում Խմբի ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը, երիտասարդ (մինչև 35 տարեկան) մասնագետների մասնագիտական համապատասխանությունը, նախագծի իրականացման նախադրյալները, փուլերը և ժամկետները, պահանջվող ֆինանսական միջոցների հիմնավորվածությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններով պայմանավորված այլ խնդիրներ:

4.9. Յուրաքանչյուր հայտատու իր ներկայացրած հայտի փորձաքննության արդյունքների մասին կծանուցվի գրավոր: Կոմիտեն Խմբի ղեկավարին տրամադրում է

գիտական փորձաքննության արդյունքները, որոնք ներառում են փորձագետների եզրակացությունները՝ ապահովելով փորձագետի անանունությունը, Խորհրդի գնահատականներրը, շեմային գնահատականը, հայտի վերջնական գնահատականը:

4.10. Մրցույթի արդյունքների բողոքարկման փուլ նախատեսված չէ:

5.Ֆինանսական և այլ պայմանները

5.1. Մրցույթի արդյունքում երաշխավորված նախագծերի ֆինանսավորումը կսկսվի **2017 թ. հունվարից**:

5.2. Կողմերից յուրաքանչյուրը ֆինանսավորում է իր կողմի գիտական խմբի աշխատանքների հետ կապված ծախսերը (**Հավելված N 3, Ձև N 4**)

5.3. Հայկական գիտահետազոտական խմբի տարեկան ֆինանսավորման առավելագույն ծավալները կազմում են **2 250,0, 3 375,0** և **4 500,0** հազար ՀՀ դրամ՝ համապատասխանաբար 2, 3 և 4 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի համար:

5.4. Աշխատանքի վարձատրության համար հատկացված առավելագույն տարեկան գումարը չպետք է գերազանցի **3 360,0** հազար ՀՀ դրամը՝ 4 անձից բաղկացած խմբի համար, **2 520,0** հազար ՀՀ դրամը՝ 3 անձից բաղկացած խմբի համար, **1 680,0** հազար ՀՀ դրամ՝ 2 անձից բաղկացած խմբի համար:

5.5. «Այլ ծախսեր» բաժնով նախատեսված գումարի մինչև 7%-ը հատկացվում է կազմակերպությանը՝ վերադիր ծախսերի համար: Մնացած գումարը կարող է բաշխվել «Սարքեր և նյութեր» և «Գործուղումներ» հոդվածներով: 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող ծախսերը պետք է հիմնավորվեն Ծախսերի նախահաշվի մեկնաբանության մեջ:

5.6. Փորձարարական բնույթի նախագծերի համար նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով կարող է նախատեսվել ենթապայմանագրային համագործակցություն. ծրագրի իրականացման համար որոշակի գումար կարող է հատկացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձանց: Ենթապայմանագրային համագործակցության դեպքում Խմբի ղեկավարը ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ կնքում է պայմանագիր և այն համաձայնեցնում Կոմիտեի նախագահի հետ: Նախահաշվի մեկնաբանության մեջ

յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար ներկայացնել առանձին հիմնավորում:

5.7. 2 (երկու) շաբաթը չգերազանցող գործուղումների համար օրապահիկը և գիշերավարձն անհրաժեշտ է հաշվարկել ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմամբ սահմանված ծախսերի չափերի: Երկու շաբաթը գերազանցող գործուղումների համար Խմբի անդամները կարող են հայցել ամսական մինչև 1500,0 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Խմբի յուրաքանչյուր անդամի օտարերկրյա գործուղումների ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի երկու ամիսը (12 ամիսների կտրվածքով):

5.8. Ֆինանսավորման երաշխավորված հայտերի ղեկավարները պետք է ներկայացնեն ընթացիկ և ամփոփիչ հաշվետվություններ՝ ըստ նախագծի իրականացման նպատակով կնքվելիք պայմանագրի պահանջների և ժամկետների:

5.9. Ծրագրի հետագա ֆինանսավորումը դադարեցվում է ընթացիկ հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ վերջինիս վերաբերյալ Խորհրդի կողմից տրված գիտական փորձաքննության բացասական եզրակացության հիման վրա:

5.10. Խմբի ղեկավարի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում նախագծի ֆինանսավորումը կդադարեցվի: Խմբի մասնակցի 2 ամիս (60 օր) Հայաստանի Հանրապետությունից անընդհատ բացակայության դեպքում Խմբի ղեկավարը 10-օրյա ժամկետում պետք է դիմի Կոմիտե՝ գիտական գործունեության արդյունավետության և տարիքային Խմբի համարժեք փոփոխություն կատարելու կամ Խմբի մասնակիցների թիվը մեկով կրճատելու առաջարկությամբ: Խմբի մասնակիցների թվի կրճատման դեպքում՝ Խմբի ղեկավարի և Կոմիտեի միջև կնքված պայմանագրի գինը ենթակա է փոփոխության:

5.11. Ֆինանսավորման երաշխավորված նախագծերի ցանկը կհրապարակվի Կոմիտեի պաշտոնական կայքում՝ **www.scs.am**:

5.12. **«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016»** մրցույթին մասնակցության համար բելառուսական կողմին ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ http://fond.bas-net.by/if234.html կայքէջից:

Մրցույթի հայկական կողմի պատասխանատու՝

Կոմիտեի աշխատակազմի գիտական գործունեության կազմակերպման վարչության միջազգային համագործակցության բաժին

Հեռ.՝ 21 01 40 + 115

Անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ

☐ **Դիմում**
☐ **Տիտղոսաթերթ («Ձև 1»)**
☐ **Նախագծի անոտացիա**
☐ **Նախագիծ**
☐ **Ղեկավարի տվյալներ («Ձև 2»)**
☐ **Տվյալներ Նախագծի կատարողի մասին («Ձև 3»)**
☐ **Ծախսերի նախահաշիվ («Ձև 4»)**
☐ **Ծախսերի նախահաշվի մեկնաբանություն («Ձև 4.1»)**
☐ **Մինչև 3 անցանկալի փորձագետների ցուցակ («Ձև 5»)**

Հավելված N 1
Հայ-բելառուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2016» մրցույթի հրավերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ՔԱՂԱՔԱՑԻ _____
(անուն հայրանուն)
_____ ից
(ազգանուն)
_____
(հասցե)
_____
(հեռախոս)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ընդունել կից ներկայացվող հայտը՝ հայ-բելառուսական գիտական հետազոտությունների համատեղ նախագծերի **«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀՀ - 2016»** միջազգային մրցույթին մասնակցելու համար:

Դիմող՝_____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

«____» _____ 2016 թ.

Հավելված N 2
Հայ-բելառուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2016» մրցույթի հրավերի

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԱՍԻՉՆԵՐՈՎ

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Մաթեմատիկա

1.2. Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ

1.3. Ֆիզիկա և աստղագիտություն

1.4. Քիմիա

1.5. Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ

1.6. Կենսաբանական գիտություններ

1.7. Այլ բնական գիտություններ

2. ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

2.1. Քաղաքաշինություն և ճարտարապետություն

2.2. էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ

2.3. Մեխանիկա

2.4. Մեքենագիտություն և մեքենաշինություն

2.5. Քիմիական տեխնոլոգիաներ

2.6. Նյութագիտություն

2.7. Բժշկական սարքաշինություն

2.8. Էկոլոգիա

2.9. Կենսատեխնոլոգիա

2.10. Նանոտեխնոլոգիա

2.11. Այլ տեսակի ճարտարագիտություն ու տեխնոլոգիաներ

3. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1. Ընդհանուր բժշկություն

3.2. Կլինիկական բժշկություն

3.3. Բժշկական կենսատեխնոլոգիա

3.4. Այլ բժշկական գիտություններ

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Հոգեբանություն

5.2. Տնտեսագիտություն և գործարարություն

5.3. Մանկավարժական գիտություններ

5.4. Սոցիոլոգիա

5.5. Իրավունք

5.6. Քաղաքական գիտություններ

5.7. Սոցիալական և տնտեսական աշխարհագրություն

5.8. Զանգվածային լրատվություն և հաղորդակցություն

5.9. Այլ հասարակական գիտություններ

Հավելված N 3
Հայ-բելառուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2016» մրցույթի հրավերի

Ձև 1

ՀԱՅ - ԲԵԼԱՌՈՒՍԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԱԽԱԳԾԵՐԻ «ՀՀ ԿԳՆ ԳՊԿ - ՀՀԲՀՀ - 2016» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ

ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2016 թ. Ծածկագիր՝ ՀԲ16 -
(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

1. Հայտի
   - վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերենով, անգլերենով և ռուսերենով)

     _____

     _____
   - բնագավառը _____
   - մասնագիտական դասիչը _____
   - բնույթը (հիմնարար/փորձարարական)
2. Հուշող (բանալի) բառեր (հայերեն, ռուսերեն և անգլերեն)

   _____

   _____
3. Հայտի ղեկավարի
   - ազգանունը, անունը, հայրանունը _____
   - ծննդյան թիվը _____
   - գիտական աստիճանը _____
   - պաշտոնը _____
   - հեռախոսը _____
   - էլեկտրոնային հասցեն _____
4. Կազմակերպության լրիվ, կրճատ անվանումները,կազմակերպաիրավական ձևը և գերատեսչական պատկանելությունը_____
5. Կազմակերպության հասցեն, հեռախոսը, ֆաքսը և էլեկտրոնային հասցեն

   _____
6. Նախագծի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____ ամիս

7. Խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____
8. Աշխատանքի վարձատրության (ներառյալ եկամտային հարկը) գումարը _____ հազար դրամ
9. Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ
10. Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ
11. Հայտի ղեկավարի ստորագրությունը _____
12. Կազմակերպության գիտական քարտուղարի (կամ ղեկավարի) ստորագրությունը _____

«____» _____ 2016 թ.

Կ.Տ.

ՆԱԽԱԳԾԻ ԱՆՈՏԱՑԻԱ*

* *Համառոտ պարբերությամբ հայերենով և անգլերենով ներկայացնել նախագծի նպատակները:*

АННОТАЦИЯ

Руководитель проекта от Республики Армения _____

(подпись)

Руководитель проекта от Республики Беларусь _____

(подпись)

ՆԱԽԱԳԻԾ*

* *1. ներկայացնել խնդրի դրվածքը, դրա արդի վիճակը, նախագծի գիտական նպատակները, հետազոտական ծրագիրը, իրականացման եղանակները, առկա և անհրաժեշտ նյութական ռեսուրսները (մինչև 8 էջ)*
2. նշել փվյալ ուղղությամբ խմբի ունեցած ձեռքբերումները և ակնկալվող արդյունքները (մինչև 2 էջ)
3. նկարագրել նախագծի բելառուսական կողմի մասնակցի կողմից իրականացվելիք խնդիրները (մինչև 2 էջ)
4. օգտագործված գրականության ցանկը:

Project Proposal*

* *ներկայացնել նախագիծն անգլերենով*

Ձև 2

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Ազգանուն, անուն, հայրանուն _____
(հայերեն, անգլերեն և ռուսերեն)
2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____
3. Գիտական աստիճանը _____
4. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

_____

5. Հրատարակված
- գիտական հոդվածներ (թիվը) _____
- մենագրություններ (թիվը) _____
6. Արտոնագրեր (թիվը) _____
7. Վերջին 5 տարում հրատարակված գիտական հոդվածները

(նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը)

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

8. Նշել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ից և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները

1) _____
2) _____
(անհրաժեշտության դեպքում ավելացնել լրացուցիչ տողեր)

«____» _____ 2016 թ. _____
(ղեկավարի ստորագրությունը)

СВЕДЕНИЯ О БЕЛОРУССКОМ РУКОВОДИТЕЛЕ ПРОЕКТА

1. Фамилия, имя, отчество _____
2. Дата рождения _____
3. Ученая степень _____
4. Место работы _____
5. Должность_____
6. Область научных интересов* _____
7. Контактный телефон _____
8. E-mail _____

Руководитель проекта от Республики Беларусь _____

(подпись)

* Указать шифр согласно Справочнику областей научных исследований

Ձև -3

ՆԱԽԱԳԾԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄԻ ԿԱՏԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ*

Ազգանուն, անուն, հայրանուն (հայերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (անգլերեն)	
Ազգանուն, անուն, հայրանուն (ռուսերեն)	
Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը	
Կրթությունը (բուհ, մասնագիտություն)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվն ու վայրը	
Աշխատանքի վայրը, պաշտոնը	
Հեռախոս (աշխատանքային, բնակարանի, բջջային)	
Էլեկտրոնային հասցե	
Նախագծի հետ առնչվող հրատարակված գիտական հոդվածները (նշել վերնագիրը, ամսագիրը, տարին, հատորը, էջերը), 5-ից ոչ ավելի	
1. 2.	

* *Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար:*

Эк 3.1

СВЕДЕНИЯ О БЕЛОРУССКОМ УЧАСТНИКЕ ПРОЕКТА*

1. Фамилия, имя, отчество _____
2. Дата _____
3. Место работы _____
4. Должность_____
5. Учёная степень / учёное звание _____

Руководитель проекта от Республики Беларусь _____

(подпись)

* Заполняется для каждого участника.

Ձև 4

ՀԱՅՏԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հայտի ծածկագիրը _____

(լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեում)

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (ներառյալ եկամտային հարկ, հազար դրամ)						
	2017 թվական			2018 թվական		
Ազգանուն, անուն	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը	Ամսական	Ամիսների քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
3)						
4)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

ԱՅԼ ԾԱԽՍԵՐ, այդ թվում		
1. ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ (ներառելով՝ ներառելով ծախսեր գիտական հետազոտությունների ընթացքում օգտագործվող նյութերի ձեռքբերման, սարքավորումների և գրենական պիտույքների համար: Թվարկել 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր ծախսերը, հիմնավորվել նախահաշվի մեկնաբանության մեջ)	2017 թվական	2018 թվական
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
2. ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ (հիմնավորել նախահաշվի մեկնաբանության մեջ)		
1) տեղական գործուղումների տրանսպորտային ծախսեր		
2) տեղական գործուղումների օրապահիկ		
3) տեղական գործուղումների գիշերավարձ		
4) օտարերկրյա գործուղումների տրանսպորտային ծախսեր		
5) օտարերկրյա գործուղումների օրապահիկ		
6) օտարերկրյա գործուղումների գիշերավարձ		
7) գործուղումների հետ կապված այլ ծախսեր (վիզա կամ այլ վճարումներ)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		

3. ԵՆԹԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ (նշել ենթապայմանագրային համագործակցության բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց, համագործակցությունը մանրամասն նկարագրել նախահաշվի մեկնաբանության մեջ)

Ենթապայմանագրային համագործակցության վարձավճար

	2017 թվական			2018 թվական		
Ազգանուն, անուն, հայրանուն	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը	Օրավարձը	օրերի քանակը	Պահանջվող գումարը
1)						
2)						
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ						

Ենթապայմանագրային համագործակցության նյութեր և ծառայություններ (Թվարկել 100,0 հազար ՀՀ դրամը գերազանցող բոլոր կետերը և հիմնավորել)	2017 թվական	2018 թվական
1)		
2)		
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ՎԵՐԱԴԻՐ ԾԱԽՍԵՐ		
ՀԱՅՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ		
ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ (ներկայացնել նախահաշվի մեկնաբանության մեջ)		

Հայտի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ _____

(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*

* *Բացատրել և հիմնավորել ֆինանսական նախահաշվի բոլոր կետերը*

Ձև 5

ՄԻՆՉԵՎ ԵՐԵՔ ԱՆՑԱՆԿԱԼԻ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ*

№	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ
1.	
2.	
3.	

* Նշել մինչև 3 փորձագետների անուններ, ում հետ առկա է շահերի բախում:

Հավելված N 4
Հայ-բելառուսական հիմնարար գիտական
հետազոտությունների համատեղ նախագծերի
«ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ՀՀԲՀՀ-2016» մրցույթի հրավերի

Փորձագիտական եզրակացություն, հայտ _____

Ղեկավարի ազգանունը _____

Հարցաշարի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է թվային գնահատականով, առավելագույնը 5 միավոր **(0,5 միավորի ճշտությամբ),** հետևյալ սանդղակով.

0	*Հարցի պատասխանը **բացակայում է** կամ այն չի կարող որոշվել տեղեկատվության բացակայության պատճառով:*
1	***Շատ վատ:*** *Պատասխանը ներկայացված է մակերեսորեն և խիստ անորոշ:*
2	***Վատ:*** *Հարցի պատասխանը բավարար չէ նրա վերաբերյալ ամբողջական կարծիք կազմելու համար:*
3	***Միջին:*** *Պատասխանը ընդհանուր առմամբ բավարարում է հարցի պահանջներին, բայց կան նաև զգալի թվով անհամապատասխանություններ, որոնք սակայն շտկելի են:*
4	***Լավ:*** *Հարցի պատասխանը առաջադրված պահանջներին համապատասխանում է որոշակի վերապահումներով:*
5	***Գերազանց:*** *Պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:*

Հարցաշար

1.	**Նպատակներ**: Որքանո՞վ է հիմնարար առաջարկվող գիտական հետազոտությունը:	
2.	**Արդիականություն**: Որքանո՞վ է արդիական առաջարկվող հետազոտությունը:	
3.	**Նորույթ**: Որքանո՞վ է նոր ու հեռանկարային առաջարկվող հետազոտությունը:	
4.	**Իրագործելիություն:** Որքանո՞վ է իրատեսական հետազոտության նպատակներին հասնելը առաջարկվող ժամանակահատվածում:	
5.	**Ծրագիր:** Որքա՞ն հստակ է ձևակերպված գիտական ծրագիրը, և որքանո՞վ է ապահովված խմբերի իրական համագործակցությունը:	
6.	**Համապատասխանություն**: Որքանո՞վ է համապատասխանում գիտական ծրագիրը հետազոտության նպատակների իրականացմանը:	
7.	**Իրականացում**: Որքանո՞վ է իրատեսական առաջարկվող գիտական ծրագրի իրականացումը:	
8.	**Առնչություն այլ բնագավառների հետ:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նպաստում տվյալ բնագավառին հարակից բնագավառների առաջընթացին:	
9.	**Նորարարական կարևորություն:** Որքանո՞վ է գիտական ծրագիրը նորարարական (գիտության հետագա զարգացում, տեխնոլոգիական արտադրանքների, սիստեմների և մեթոդների բարելավում, զգալի տնտեսական կամ հասարակական ազդեցություն):	
10.	**Իրականացման մեթոդներ:** Որքանո՞վ են առաջարկվող մեթոդները համապատասխանում գիտական ծրագրին:	
11.	**Իրականացման փուլեր:** Որքանո՞վ են համապատասխանում իրականացման փուլերը գիտական ծրագրին:	
12.	**Իրականացման փուլերի վերահսկելիություն:** Որքանո՞վ է իրատեսական գիտական ծրագրի փուլերի վերահսկելիությունը:	
13	**Երիտասարդ մասնագետներ:** Որքանո՞վ են համապատասխանում խմբում ընդգրկված երիտասարդ մասնագետների (մինչև 35 տարեկան), ասպիրանտների, ուսանողների մասնագիտական ուղղվածությունը գիտական ծրագրի իրականացմանը:	
14.	**Տեխնիկական ապահովվածություն:** Որքանո՞վ է գիտական խումբն ապահովված տեխնիկական միջոցներով:	
15.	**Համագործակցություն:** Ի՞նչ մակարդակի վրա է գտնվում երկկողմ համագործակցությունը (վերջին 10 տարիներին համատեղ հրապարակումների առկայությունը):	
16.	**Արդյունքների տնօրինում:** Որքա՞ն հստակ է ձևակերպված հետազոտության արդյունքների տնօրինումը. արդյունքների օգտագործում և տարածում (հրապարակումներ, գիտաժողովներ և այլն), նորարարական կարողության օգտագործում (տեխնոլոգիական ներդրում, ցուցադրում, փորձնական նմուշ, նախատիպ և այլն), մտավոր սեփականության տնօրինում (արտոնագիր, հեղինակային իրավունք և այլն):	
	Փորձագետի գնահատական (16 գնահատականների գումարը)	

Փորձագետի մեկնաբանություններ (պարտադիր է, ծավալը չի սահմանափակվում)

Փորձագետ _____ Ամսաթիվ_____

Խորհրդի եզրակացություն

1.	**Գիտական ծրագրի ղեկավար:** Որքանո՞վ է համապատասխանում հայկական կողմի ղեկավարի մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
2.	**Գիտական ծրագրի կատարողներ:** Որքանո՞վ է համապատասխանում հայկական կողմի կատարողների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
3.	**Բելառուսական խումբ:** Որքանո՞վ են համապատասխանում բելառուսական կողմի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գիտական ծրագրի իրականացմանը:	
4.	**Նախահաշիվ:** Որքանո՞վ է հատկացվող ֆինանսավորման ծավալը բավարար գիտական ծրագրի իրականացման համար:	
	Խորհրդի անդամի գնահատականը (4 գնահատականների գումարը)	
	Վերջնական գնահատական (Փորձագետի և հանձնաժողովի գնահատականների գումարը)	

Խորհրդի անդամ(ներ)_____

(անուն, ազգանուն) (ստորագրություն) Ամսաթիվ_____